

## Հ.Մ.Ը.Մ. - Կամք Մոնթրեալի Կառույցը

Հ.Մ.Ը.Մ. - Կամք Մոնթրեալի մասնաճիւղը՝ հիմնուած է 50 տարիներ առաջ 1958 թուին: Մասնաճիւղը իր փոքրաթիւ անդամներով եղած է առաջնորդը հայապահպանման եւ հայացի դաստիարակութեան: Տարիներու յարատեւ աշխատանքներով, հասցուցած է տիպար միութենականներ, որոնք վառ պահելով ջահը՝ փոխանցած են զայն սերունդէ սերունդ: Միշտ ի մտի ունենալով Հ.Մ.Ը.Մ. -ի նշանաբանը՝ « Բարձրացիր, Բարձրացուր », անոնք ճիգ թափած են բարձրանալու եւ բարձր պահելու միութիւնը:

Տարիներու ընթացքին ընդունելով նոր անդամներ, տարբեր քաղաքներէ, մասնաճիւղը հասած է իր ներկայ վիճակին: Ինչպէս անցեալին, ներկայիս նոյնպէս մասնաճիւղը կը շարունակէ իր աշխատանքները, անմառ պահելու փոխանցուած ջահը:

Մասնաճիւղը ունի աւելի քան 868 անդամներ, ինչ որ կը դասէ առաջին բազմանդամ միութիւնը Գանատայի գաղութէն ներս: Որպէս վարիչներ՝ մասնաճիւղը ունի իր վարչութիւնը որուն կողքին կան նաեւ մարզական եւ սկաուտական խորհուրդները: 2007-2008 տարեշրջանի վարչութիւնը կը բաղկանայ 9 անդամներէ՝ Եղբ. Տիրան Շահինեան, Եղբ. Գրիգոր Ապրազեան, քոյր. Սօսի Հայրապետեան, քոյր. Սիլէիա Պուրսալիան, Եղբ. Ռիչըրտ Մելքոնեան, Եղբ. Յարութ Պոյամեան, Եղբ. Ճորճ Պայլոզեան, Եղբ. Գէորգ Պիլէմճեան եւ Եղբ. Յարութ Մետրոպեան. Մարզական խորհուրդը 7 անդամներէ՝ Եղբ. Պերճ Աթլիկեան, Եղբ. վարուժան Տատաղեան, Եղբ.Տիգրան Եօթնաղբայրեան, Եղբ.Հենրի Ամիրեան, Եղբ.Ժօզեֆ Գոզանեան,Եղբ.Մարտիկ Գաթարոեան, քոյր. Լիլի Թաուիլեան քոյր. Վերա Գիգիրեան եւ քոյր.Մարալ Թաուիլեան:

Սկաուտ խորհուրդը 11 անդամներէ՝ Եղբ. Լէօն Արապեան, Եղբ. Արա Էկօյեան,Եղբ. Վահան Բանիկեան քոյր. Արշօ Ղերձակեան, Եղբ.Արթօ Պասմաճեան, քոյր.Մարալ Գաթարոյեան, քոյր.Հուռիկ Լիպարեան, քոյր. Լիզա Բարաղամեան. քոյր Ղինա Ղազելեան, քոյր Քրիստին Սահակեան եւ քոյր Լենա Մինասեան, որոնք ուել մէկ ճիգ չեն խնայեր ընդլայնելու եւ բարելաւելու մասնաճիւղիս գործունէութիւնը:

Սկաուտական բաղանքին մէջ, մասնաճիւղը ունի աւելի քան 377 քոյր եղբայրներ: Աղջկանց բաղանքը կը բաղկանայ՝ արժուիկներու, արեւուշներու, յետախոյզներու եւ պարմանուիիներու խումբերէ, իսկ տղոցը՝ երկսեռ Մոկլի ի վոհմակ մը, Գայլիկներու, արիներու եւ երէցներու խումբերէ: Վերոյիշեալ խումբերը կ'առաջնորդուին խմբապետական կազմի կողմէ, որը կը բաղկանայ 32 քոյր եղբայրներէ, իսկ մասնաճիւղի տղոց բաժնի խմբապետն է՝ եղբայր Էրիք Արապեան:

Մարզական գետնի վրայ, մասնաճիւղը ունի 3 մարզիկ մարզիկուիիներ, որոցմէ 154-ը միաժամանանակ մաս կը կազմեն սկաուտական շարքերուն: 7 զանազան տեսակի մարզածեւերուն մէջ՝ Պասքէթպոլ, Ոտնագնդակ, Վոլի Պոլ, Ֆլոր Հագի, Սեղանի Թէնիս, Ճատրակ եւ Աթլէթիզմ, կան տարբեր մակարթակի խումբեր:

Պասքէթպոլի մարզածեւի մէջ, մասնաճիւղը ունի 3 աղջկանց եւ 6 տղոց խումբեր, Վոլի Պոլի 1 աղջկանց խումբ, Ոտնագնդակի 2 աղջկանց եւ 11 տղոց խումբեր, Ֆլոր Հագիի 1 տղոց խումբ, Ճատրակի եւ Սեղանի Թէնիսի երկսեռ խումբեր եւ ի վերջոյ ունինք Աթլէթիզմի բաժինը ուր իրենց մասնակցութիւնը կը բերեն աւելի քան 40 քոյրեր եւ եղբայրներ:

Մասնաճիւղը իր սկաուտական եւ մարզական կազմերէն անկախ, ունի շքեղ Ֆանֆար մը ղեկավարութեամբ Եղբ. Արա Յակոբեանի եւ մասնակցութեամբ 26 քոյր եղբայրներու:

Այս բոլորին կողքին մասնաձիւղը նոյնպէս հպարտ է իր 264 անդամներով, որոնք մաս կը կազմեն Հ.Ս.Ը.Ս. -Կամք Մոնթրէալի ընտանիքին եւ որոնք միշտ երկար կը պահեն իրենց օժանդակ ձեռքերը:  
Տիրան Շահինեան